ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2015թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ գլխին և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Կոմիտասի պողոտայի հ.15 հասցեում գտնվող գույքը (165.4քմ մակերեսով հողամաս և 176.5քմ ներքին մակերեսով շինություն) փոխանակել Միքայել Կտրիչի Սարդարյանի սեփականությունը հանդիսացող Կոմիտասի պողոտայի հ.16/4 շենք հ.2 հասցեում գտնվող գույքի հետ (270.72քմ մակերեսով հողամաս և 177.34քմ մակերեսով շինություն)։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Միքայել Կտրիչի Սարդարյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 12.05.2015թ. հ.12052015-01-0138 վկայական) Կոմիտասի պողոտայի հ.16/4 շենքի հ.2 հասցեում գտնվող գույքը (270.72 քմ մակերեսով հողամաս և 177.34քմ մակերեսով շինություն), Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.12.2007թ. հ.2243090 վկայական) Կոմիտասի պողոտայի հ.15 հասցեում գտնվող գույքի հետ (165.4քմ մակերեսով հողամաս և 176.5քմ ներքին մակերեսով շինություն) փոխանակելու առաջարկով:

Փոխանակման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Կոմիտասի պողոտայի հ.15 հասցեում փոխանակման համար առանձնացված գույքը գտնվում է անբարեկարգ կիսաքանդ վիճակում, փաստացի օգտագործման համար պիտանի չէ և դրա վերանորոգման համար կպահանջվի զգալի ֆինանսական ներդրումներ: Այն պարփակված է այլ անձի սեփականություն հանդիսացող գույքով, որը ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա մշակվող կառուցապատման նախագծով առաջիկայում նախատեսվում է վերակառուցել: Վերակառուցման արդյունքում քաղաքաշինական առումով ավելի կանոնակարգված օպտիմալ կառուցապատումն ապահովելու նպատակով՝ նպատակահարմար է գտնվել կատարել վերոնշյալ գույքերի փոխանակումը:

Հարկ է նշել նաև, որ վերոնշյալ գույքը հնարավոր չէ վերակառուցել առանց համայնքային սեփականություն հանդիսացող գույքին վնաս պատճառելու, քանի որ այն գտնվում է անմիջապես կից տեխնիկապես վատ վիճակում:

Գույքերի փոխանակումը շահեկան է նաև այն առումով, որ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը նախկինում օգտագործվել է որպես սպորտային դպրոց, սակայն գտնվելով վթարային և անմխիթար վիճակում արդեն իսկ բավականին տևական ժամանակ չի օգտագործվում իր նշանակությանը համապատասխան և գույքերի փոխանակման արդյունքում տրամադրվող գույքը, որը գտնվում է հարևանությամբ փողոցի դիմացի հատվածում, հնարավոր կլինի անմիջապես օգտագործել և շահագործել առանց ներդրում կատարելու, քանի որ այն գտնվում է նորակառույց շենքում, ունի առանձին մուտք և ամբողջությամբ վերանորոգված է: Արդյունքում՝ հնարավորություն կստեղծվի նաև կազմակերպելու սպորտային դպրոցի գործունեությունն ավելի լավ պայմաններում:

Կատարվել է նաև անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման աշխատանքներ, որից հետևում է, որ Կոմիտասի պողոտայի հ.16/4 շենքի հ.2 հասցեում քաղաքացի Միքայել Կտրիչի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի շուկայական արժեքը կազմում է 82 400 000 ՀՀ դրամ, իսկ Կոմիտասի պողոտայի հ.15 հասցեում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի շուկայական արժեքը կազմում է 74 500 000 ՀՀ դրամ:

Քաղաքացի Միքայել Կտրիչի Սարդարյանը պարտավորվել է նաև փոխանակման արդյունքում հրաժարվելու փոխանակվող գույքերի գնահատված շուկայական արժեքի տարբերությունից:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գույքային միավորների փոխանակման արդյունքում Երևան համայնքին է անցնում ավելի մեծ շուկայական արժեք ունեցող գույք, որը ամբողջությամբ վերանորոգված է, ապա նպատակահարմար է գտնվել նախապատրաստելու Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ